Отчет

1917

ՊՍՏԱՐԱԿ. ՀԱՅ ԺՈՂ. ԿՈՒՍԱ

№ 1.

Ծրագիր

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԱՆ

A 1/1892

ՎԵՐԱՔՆՆՎԱԾ Ա. ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Սեպտեմբերի 27-ին

ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան «Էկսելսիոր», Մեծ-Ղանճի փող. № 3
1917

9.14 (47.925)
Ծ-89

ԳՐԱԳԱՐԱՆ
ԳԵՈՐԳ ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳԵՈԶԵԱՆԻ
№
Տարի „ „
սկզբն. գրվ. „ „ „ „

A 1/18902

ՀԱՅ ԺՈՂ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ,

ՎԵՐԱԲՆՎԱԾ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ.

—

1. Հայ Ժող. Կուսակցութիւնը համազգային է. նա կարող է ճիւղեր բանալ թէ Ռուսաստանում և թէ նրա սահմաններից դուրս։

2. Հայ Ժող. Կուսակցութիւնը սոցիալ-դեմոկրատական է. նրա մէջ անարգել կարող են մտնել հայ ազգին պատկանող բոլոր հասակաւոր անձերը, որոնք ընդունում են Կուսակցութեան ծրագիրը, առանց սեռի, դաւանանքի և դասակարգի խտրութեան։

3. Ռուսաստանում բնակվող ոտարերկրացի հայերը կարող են Կուսակցութեան անդամ լինել, սակայն նրանք չեն մասնակցում պետական հարցերի լուծման և պետական հիմնարկութիւնների գործունեութեան։

ՊՈՂՈՍՅԱՆ ԼՈՍԱՆԳԵՂԱՐՔ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ա) Քաղաքացիների իրաւունքները

4. Ռուսաստանի բոլոր քաղաքացիները, առանց սեռի, կրօնի և ազգի խտրութեան, հաւասար են օրէնքի առաջ։ Բոլոր ազգերի դասային տարբերութիւնները և անձի ու ստացուածքի իրաւունքի սահմանափակումները վերացվում են։

5. Ամեն մի քաղաքացի վայելում է խղճի ու դաւանանքի ազատութիւն։ Չէ թոյլ տրվում որևէ հալածանք դաւանանքի կամ համոզմունքի, դաւանանքը փոխելու կամ նրանից հրաժարվելու պատճառով։

6. Ամեն ոք ազատ է կատարել իր կրօնական և աստուածպաշտական արարողութիւնները և քարոզել իր դաւանանքը, եթէ միայն սրանք չեն պարունակում այնպիսի գործողութիւններ, որոնք պատժելի են քրէական օրէնսդրութեամբ։

7. Ոչ մի եկեղեցի կամ դաւանութիւն պետութեան մէջ չը պէտք է վայելէ առանձին արտօնութիւն։ Եկեղեցին անջատ է պետութիւնից։

8. Ամեն ոք ազատ է արտայայտել իր մտքերը բերանացի կամ գրով և նրանց հրատարակել ժամուլի կամ այլ միջոցով։ Գրաքննութիւնը, ընդհանուր կամ յատուկ, ինչ անուան տակ էլ որ լինի, վերացվում է և չէ կարող վերանորոգվել։ Բերանացի կամ տպագրական խօսքի միջոցով կատարված յանցանքների կամ օրինազանցութիւնների

համար յանցաւորները պատասխանատու են միայն դատարանի առաջ։

9. Ռուսաստանի բոլոր քաղաքացիներին իրաւունք է տրվում կազմակերպել հրապարակական ժողովներ բացօդեայ կամ փակ շինութիւնների մէջ՝ ամեն տեսակ հարցեր քննելու համար։

10. Ռուսաստանի բոլոր քաղաքացիներն իրաւունք ունին հիմնելու միութիւններ և ընկերութիւններ, առանց այս մասին թոյլտուութիւն խնդրելու։

11. Պետիցիա տալու իրաւունք ունին ինչպէս առանձին անհատները, այնպէս էլ ամեն տեսակ խմբակցութիւններ, միութիւններ ու ժողովներ։

12. Իւրաքանչիւր մէկի անձը և բնակարանը անձեռնմխելի են։

13. Մասնաւոր բնակարաններ մտնելը, խուզարկութիւններ կատարելը, իրեր վերցնելը, մասնաւոր գրագրութիւն բանալը թոյլ են տրվում միայն օրէնքով ցոյց տրված դէպքերում, այն էլ միայն դատարանի վճռով։ Ամեն մի ձերբակալված անհատ քաղաքներում և այն տեղերում, որտեղ կայ դատարանական իշխանութիւն՝ 24 ժամվայ ընթացքում, իսկ միւս տեղերում երեք օրվայ ընթացքում պէտք է կամ արհակվի կամ յանձնվի դատական իշխանութեան։ Ամեն մի ձերբակալում, որ տեղի է ունեցել առանց բաւարար հիմունքի կամ աւելի երկար է տևել քան օրէնքով սահմանված է, իրաւունք է տալիս տուժողին իր ազատների փոխարինութիւն պահանջելու պատասխանից։

14. Ոչ ոք չէ կարող հալածանքի և պատժի ենթարկվել այլապէս, քան օրէնքի հիման վրա՝ դատական իշխանութեան և օրէնքով սահմանված դատարանի միջոցով։ Ոչ մի արտակարգ դատարան թոյլ չէ տրվում։

15. Ռուսաստանի հիմնական օրէնքը պետութեան մէջ բնակող բոլոր ազգութիւններին պէտք է երաշխաւորէ ազատ հուլատրական ինքնորոշման իրաւունք, այն է լիակատար ազատութիւն գործ ածելու հասարակական կեանքում զանազան լեզուներ և բարբառներ, ազատութիւն հիմնելու և պահելու ամեն տեսակ ընկերութիւններ և կրթական ու գիտական հիմնարկութիւններ, որոնք նպատակ ունին պահպանել ազգութիւնների լեզուն, գրականութիւնը և կուլտուրան։

16. Ռուսերէնը պէտք է լինի պաշտօնական լեզու պետութեան կենտրոնական հիմնարկութիւնների, զօրքի և նաւատորմի մէջ։

17. Պետական լեզուի հետ միաժամանակ տեղական լեզուների գործածութիւնը պետական և հասարակական հիմնարկութիւնների մէջ և այն ուսումնարանների մէջ, որոնք պահպանվում են պետութեան կամ ինքնավար մարմինների հաշվով, կարգադրվում է պետական և տեղական օրէնքներով և հասարակական հիմնարկութիւնների ձեռքով՝ օրէնքի սահմաններում։

18. Ամեն մի վայրի բնակչութիւնը պէտք է իրաւունք ունենայ կրթութիւն ստանալու իր մայրենի լեզուով ուսման բոլոր աստիճաններում։

Բ) Պետական կազմը

19. Ռուսաստանը պիտք է լինի դեմոկրատական պարլամենտական հանրապետություն. օրենսդրական իշխանությունը պատկանելու է ժողովրդական ներկայացուցչությանը։ Գործադիր իշխանության գլուխ կանգնած պիտք է լինի հանրապետության նախագահը, որ ընտրված կը լինի որոշ ժամանակամիջոցով ժողովրդական ներկայացուցչության կողմից և կը կատարվի մինիստրության ձեռքով, որ պատասխանատու է ժողովրդական ներկայացուցչության առաջ։

20. Ժողովրդական ներկայացուցիչները ընտրվում են ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ձայնատվությամբ, առանց դասանանքի, ազգի և սեռի խտրության, համեմատական սկզբունքով։

21. Ժողովրդական ներկայացուցչությունը մասնակցում է օրենսդրական իշխանությունը իրագործելու, պետության եկամուտը սահմանելու մեջ և վերանայում է բարձր ու ստորին ադմինիստրացիայի գործողությունների օրինականության և նպատակայարմարության վրա։

22. Ոչ մի որոշում, կարգադրություն, հրաման, ինչ անուն էլ որ կրէ և ումից որ ելնէ, չէ կարող օրենքի ոյժ ստանալ՝ եթէ հիմնված չէ ժողովրդական ներկայացուցչության որոշման վրա։

23. Պետական եկամուտը որոշվում է օրենսդրական կարգով, ոչ ավելի քան մի տարի ժամանակով։ Ոչ մի տեսակ հարկ, տակ կամ տուրք յոգուտ պետության, նոյն-

պէս և պետական փոխառութիւնները չեն կարող սահմանվել այլապէս՝ քան օրէնսդրական կարգով։

24. Ժողովրդական ներկայացուցիչների ժողովի անդամներն իրաւունք ունին օրէնսդրական նախաձեռնութեան և հարցապնդումի։

Գ) Տեղական ինքնավարութիւն եւ autonomia

25. Տեղական ինքնավարութիւնը կիրառվում է ամբողջ ռուսական պետութեան մէջ։

26. Տեղական ինքնավար մարմինների ներկայացուցչութիւնը պէտք է ընտրվի ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի և համեմատական ձայնատուութեամբ; առանց սեռի, դաւանանքի և ազգութեան խտրութեան։

27. Ամենին ինքնավար միութիւնների ժողովները կարող են ընտրել ու կազմել բարձրագոյն ինքնավար միութիւնների ժողովներ։ Նահանգական զեմստվոներն իրաւունք ունին ժամանակաւոր և մշտական միութիւններ կազմել իրար հետ։

28. Տեղական ինքնավար մարմինների իրաւասութիւնը սահմանվում է տեղական կառավարութեան բոլոր գործերի վրա ի միջի այլոց և ապահովութեան ու բարեկարգութեան ոստիկանութեան վրայ, բացառութեամբ կառավարչութեան այն ճիւղերի, որոնք պետական կեանքի ներկայ պայմաններում անհրաժեշտ է պահել կենտրոնական իշխանութեան ձեռքում։ Տեղա-

կան ինքնավար մարմինների օգտին պէտք է թողնվի պետական բիւջէի մէջ մտնող եկամուտներից մի մասը։

29. Կենտրոնական իշխանութեան տեղական ներկայացուցիչների գործն է՝ հսկել տեղական ինքնավար մարմինների գործունէութեան օրինականութեան վրայ։ Այս առիթով ծագելիք վէճերի ու տարակուսանքների վերջնական լուծումը պատկանում է դատական հիմնարկութիւններին։

30. Հիմնադիր ժողովով պէտք է սահմանվեն տեղական աւտոնոմիա և շրջանային ներկայացուցչական ժողովներ՝ օրէնսդրական իրաւունքով որոշ հարցերի վերաբերմամբ, համաձայն ազգաբնակութեան պահանջներին։

31. Տեղական աւտոնոմ երկիրների սահմանները, ազգաբնակութեան ցանկութեամբ, կարող են փոփոխվել՝ աւելի միատարր ազգաբնակութիւն կազմելու համար ըստ ազգային յատկանիշի։

Դ. Դատաստան

32. Դատաստանական իշխանութիւնն անջատ է վարչականից։ Դատաւորներն անփոփոխելի են և անկախ։ Դատավարութիւնը հրապարակական է։ Դատարանի առաջ բոլորը հաւասար են։

33. Երդուեալների դատարանների իրաւասութիւնը որոշվում է միմիայն օրէնքով նախատեսված պատիժների ծանրութեան աստիճանով, անկախ գործի տեսակից։ Յանցանքն դէպքերի իրաւասութեան մէջ

են մտնում բոլոր պետական ու տպագրական օրենքի դէմ յանցանքները։

34. Ոչ ոք չէ կարող պատժի ենթարկվել առանց պատշաճաւոր դատարանի վճռի, որ օրինական ոյժ է ստացել։

35. Արդարադատութեան մինիստրը իրաւունք չունի միջամտելու դատաւորներ նշանակելու կամ տեղափոխելու գործում կամ դատաստանական գործերի վարման մէջ։

36. Դատաւորները պարգևներ չեն ստանում։ Հաշտարար դատաւոր կամ երդուեալ ատենակալ ընտրվելու համար չէ պահանջվում ստացուածքային ցենզ։

37. Փաստաբանական մարմինը կազմակերպվում է իսկական ինքնավարութեան սկզբունքով։

38. Մահվան պատիժն անպայման և առ միշտ վերացվում է։ Մտցվում է պայմանաւոր դատապարտութիւն։ Մտցվում է պաշտպանութիւն նախնական քննութեան միջոցին։ Դատարանին յանձնելու գործողութեան մէջ մտցվում է մրցողական սկզբունք։

39. Արդարադատութեան միրձաւորագոյն գործերը պէտք է լինին՝ քրէական օրինագրքի հիմնական վերաքննութիւնը, վերացումը այն որոշումների, որոնք հակասում են քաղաքական ազատութեան սկզբունքներին, և վերամշակումը քաղաքացիական օրինագրքի։

Ե.) Ֆինանս. եւ տնտեսական քաղաքակա-նութիւն

40. Վերաքննութիւն պետական եկամտի բիւջէի, վերացնելու համար այն ծախսերը, որոնք անհարմարակայարմար են կամ շատ մեծ են; և աւելացնելու համար այն ծախսերը, որոնք ծառայում են ժողովրդի իսկական կարիքներին։ Ոչնչացում յետ-գնման (выкупъ) վճարքների։

41. Զարգացում ուղղակի հարկադրութեան ի հաշիւ կողմնակի հարկադրութեան և հետզհետէ վերացում կողմնակի հարկերի, որ դրված են ժողովրդի համար գործածական իրերի վրայ։

42. Բարեփոխութիւն ուղղակի հարկերի՝ պրոգրէսիվ եկամտային և սահմանային հարկադրութեան հիման վրայ։ Մանր վարկը զարգացնել։ Պրոգրէսիվ հարկ սահմանել ժառանգութեան վրայ։

43. Առանձին արդիւնաբերութիւնների դրութիւնն ի նկատի ունենալով՝ պակասեցնել մաքսային տուրքերը, էժանացնելու համար ժողովրդական գործածութեան յատուկ իրերը, զարգացնելու արդիւնագործութիւնն ու երկրագործութիւնը։

Զ) Հողային օրենսդրութիւն

44. Սակաւահող և անհող գիւղացիների, ինչպէս և մանր տնտեսութիւն վարող այլ անձերի հողային կարիքը լրացնելու համար պէտք է յատկացնել պետական, ուղէլների,

կարիներային, վանքապատկան, եկեղեցապատկան, գիւղական և ազնուականական բանկերին պատկանած հողերը, նոյնպէս և մասնաւոր սեփականատէրերի (ֆիզիկական և իրաւաբանական անձերի) հողերը՝ աշխատաւորական նորմայից բարձր, որոնք ենթակայ են ստիպողական գրաւման։

45. Ստիպողական գրաւման չեն ենթարկվի մանր կալուածները, որոնք աշխատաւորական նորմայից բարձր չեն, զեմստվոյին և այլ հիմնարկութիւնների հողերը, որոնք սահմանված են կրթական, ընդհ. առողջապահական, գիտական և այլ հանրօգուտ նպատակների համար. նոյնպէս և ագարակները, պարտէզները, այգիները, բանջարանոցները և զորձարանների տակ եղած հողերը։

46. Այս հողային պաշարից, դուրս գալով պահպանվելիք անտառները և պետական մարմինների և ինքնավարութիւնների կարգադրութեան տակ թողնվելիք մասերը, նախ և առաջ բաւարարութիւն կը տրվի տեղական անհող և սակաւահող գիւղացիներին՝ սահմանվելիք նորմայով։ Իսկ մնացորդը կը յատկացվի կամ տեղական ազգաբնակութեան յետագայ կարիքների համար կամ ուրիշ տեղերից եկող գաղթականների համար։

Ծանօթ.—Թէ աշխատաւորական նորման և թէ լրացուցիչ հողաբաժինների նորման իւրաքանչիւր տեղում պէտք է որոշվի յատուկ հողային կոմիտէների միջոցով, ըստ հողի քանակութեան, յատկութեան և օգտագործման եղանակի։

47. Պետական հողերի պաշարը սրվում է կարօտ ազգաբնակութեան՝ մշտապէս (առանց պայմանաժամի) օգտվելու սկզբունքով, ինչպէս առանձին անհատներին, այնպէս էլ համայնքներին և հողագործական ընկերութիւններին, համաձայն տեղերում գոյութիւն ունեցող կարգերի և ազգաբնակութեան ցանկութեան։

48. Մասնաւոր սեփականատէրերից հողերը պէտք է գնվեն ազատութեան հաշվով արդարացի (ոչ շուկայի) գնահատութեամբ, ի նկատի ունենալով ի միջի այլոց տիրապետութեան հիմունքները։ Վճարումը կը կատարվի գնման վկայագրերով, որոնց տոկոսի մի որոշ մասը կը ստացվի բաժանված հողի վրա նշանակված տուրքից։

49. Պէտք է կազմակերպել պետականային օգնութիւն գիւղացիներին՝ գաղթականութեան, տեղափոխութեան և անտեսութիւնը բարւոքելու համար, ինչպէս նաև բնութեան պատահարների և աղէտների դէպքում։ Անջրդի հողերի ոռոգում պետական հաշվով։

50. Օրէնքի միջոցով բարւոքում տրենդի պայմանների։ Նուազում տրենդի՝ օրէնքով սահմանված նօրմայով։

51. Վերացում այժմ գոյութիւն ունեցող կարգերի երկրագործական մշակները վարձելու վերաբերմամբ։ Բանվորական օրէնսդրութեան տարածումը երկրագործական մշակների վրա։ Սահմանում երկրագործական հսկողութեան։

Է) Բանվորական օրենսդրություն

52. Աղատություն բանվորական միություններ և ժողովներ։

53. Գործադուլի իրավունք։

Գործադուլի ժամանակ կամ նրա առիթով կատարված օրինազանցությունները պատժվում են օրենքով՝ սովորական հիմունքներով։

54. Բանվորական օրենսդրությունը տարածել վարձու աշխատանքի բոլոր տեսակների վրա։ Սահմանել աշխատանքի տեսչություն, բանվորների ներկայացուցիչների մասնակցությամբ, աշխատավորների շահերը պաշտպանող օրենսդրության իրագործման վրա հսկելու համար։

55. Ութ-ժամեայ բանվորական օր սահմանել օրենսդրական կարգով։ Այս նորմայի անմիջական ներմուծումը ամեն տեղ, ուր ներկայումս հնարավոր է այս, և նրա հետագա ներմուծումը միս արդյունագործությունների մեջ։

56. Արգելել գիշերային և նորմայից դուրս աշխատանքները՝ բացի այն դեպքերից, երբ այդպիսի աշխատանքներն անհրաժեշտ են տեխնիկական կամ ընդհանուր-հասարակական տեսակետից։

Կանանց և անչափահասների աշխատանքի պաշտպանության միջոցները ընդարձակել։

57. Սահմանել հաշվարար տեսաններ՝ բաղկացած աշխատանքի և կապիտալի կող-

մից հաւասար թվով ներկայացուցիչներից, վիճելը քննելու և վճռելու համար։

58. Պետութեան միջոցով պարտադիր ապահովագրութիւն մտցնել հիւանդութիւնների, դժբաղդ դէպքերի և պրոֆեսիոնալ հիւանդութիւնների դէմ, ձեռնարկողների հաշվով։

59. Պետական ապահովագրութիւն ծերութեան և աշխատանքի անկարողութեան դէմ բոլոր անձնական աշխատանքով ապրողների համար։

Ը) Ժողովրդական լուսաւորութիւն

60 Ժողովրդական լուսաւորութիւնը պէտք է կազմակերպվի ազատութեան, հասարակացման և ապակենտրոնացման սկզբունքներով։

61. Վերացնել դպրոց մտնելու բոլոր սահմանափակումները, որ հիմնված են սեռի, ծագման և կրօնի վրա։

62. Զանազան տիպի դպրոցների մէջ մտցնել յաջորդականութեան կապ, որով դիւրացվի տարբեր տիպի դպրոցից բարձրագոյնը մտնելը։

63. Ազատութիւն մասնաւոր և հասարակական նախաձեռնութեան՝ բանալու և կազմակերպելու ամեն տեսակի ուսումնական հաստատութիւններ նաև արտաքոյ դպրոցական կրթութեան համար։ Ազատութիւն լեզուի և դաստիարակութեան։

64. Լիակատար ինքնավարութիւն և դաստիարակութեան ազատութիւն համալսարաններում և մեր բարձրագոյն դպրոցնե-

բում։ Սրանց թիւն աւելացնել, վարձը պակասեցնել։

65. Աժեն տեսակի միջնակարգ դպրոցների թիւն աւելացնել. ուսման վարձը պակասեցնել։ Տեղական հասարակական հիմնարկութիւնների մեծ մասնակցութիւն միջնակարգ դպրոցների տնտեսական, կրթական և դաստիարակչական գործում։

66. Ընդհանուր, ձրի և պարտադիր ուսուցում նախնական դպրոցներում։

67. Նախնական ուսուցման գործը պէտք է յանձնվի տեղական ինքնավարութիւնների կարգադրութեան։

II ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Ա) Ռուսահայաստան.

68. Անդրկովկասի հայաբնակ վայրերում, որոնց սահմանները պէտք է փոփոխել ըստ ազգային համախմբումների, հայերը պէտք է ստանան ազգային տերիտորիալ աւտոնոմիա՝ օրէնսդրական մարմնով տեղական հարցերի վերաբերմամբ։

69. Հայկական աւտոնոմիայի իրաւասութեան ենթարկվում են տեղական բոլոր վարչական, տնտեսական, կուլտուրական ու դատաստանական գործերը։

70. Հայկական աւտոնոմիայի սահմաններում գործավարութեան պաշտօնական լեզուն հաստատվում է հայերէնը, ճանաչելով հանդերձ փոքրամասնութիւն կազմող ազգութիւնների լեզուների իրաւունքը։

A/1890

71. Կենտրոնական կառավարութեան և նրա օրգանների, ինչպէս նաև այլ ինքնավար մարմինների հետ պաշտօնական յարաբերութիւնները կատարվում են պետական՝ առաջերէն լեզուով։

72. Հայկական աւտոնոմիայի սահմաններից դուրս գտնվող հայերը վայելում են անձնական ազգային-կուլտուրական աւտոնոմիա, հասարակական-իրաւական միութիւնների իրաւունքով։ Նոյն իրաւունքները պէտք է վայելեն հայկական աւտոնոմիայի սահմաններում փոքրամասնութիւն կազմող ազգերը։

73. Եկեղեցական գործերում կուսակցութիւնը ձգտելու է, որ հայ ժողովուրդը, ինչ կրօնի և դաւանութեան էլ պատկանի, լիակատար ազատութիւն վայելէ իր եկեղեցական կրօնական գործերը կարգադրելու մէջ։

74. Հայոց եկեղեցուն պատկանող կալուածները, որոնց արդիւնքով պահպանվում են հայ ժողովրդի հոգևոր և կուլտուրական հաստատութիւնները, կազմում են համազգային անկապտելի սեփականութիւն։

Բ) Հայկական հարց

75. Հայկական հարցի (Թիւրքահայաստանի) նկատմամբ, ընդունելով որ դա միջազգային հարց է և կարող է լուծում ստանալ միջազգային կոնգրէսում, կուսակցութիւնը ամեն կերպ պէտք է աշխատի, որ այդ հարցը լուծվի ըստ Թիւրքահայերի ցանկութեան։

2045 559

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԺՈՂ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը հիմնական նպատակ ունի հասատել Ռուսաստանում դեմոկրատական պարլամենտական հանրապետութիւն և բարեքել ժողովրդի աշխատաւոր խաւերի տնտեսական դրութիւնը։

Կուսակցութեան անդամ կարող են լինել այն հայերը, որ ընդունում են կուսակցութեան ծրագիրը և համաձայն են ենթարկվելու կուսակցական կարգապահութեան, որպիսին սահմանվում է կուսակցութեան ծրագրով և կուսակցական հաստատումների կողմից։

Կուսակցութեան անդամներ ընդունում են թէ կենտրոնական և թէ այլ կոմիտէները, ինչպէս նաև նրանցից լիազորված անձերը։ Որևէ կոմիտէի կամ նրա լիազորի կողմից ընդունված անդամը մտնում է հենց նոյն կոմիտէին ենթարկված կազմի մէջ։

Կուսակցութեան այն անդամները, որոնք ուղղակի կամ կողմնակի գործում են ի ջնաս կուսակցութեան շահերի՝ արտաքսվում են նրա կազմից։ Արտաքսումը կատարում է կենտրոնական կոմիտէը։ Եթէ արտաքսվածը ցանկանայ՝ վերջնական լուծումը կը յանձնվի կուսակցութեան համագումարին։

Կուսակցութեան անդամները պարբերական վճարքներ են հատուցանում կուսակցութեան գանձարանին, որոնց քանակութիւնը որոշում են համագումարները։

Կուսակցութեան օրգաններն են ընդհանուր և տեղական համագումարները, կենտրոնական (Թիֆլիսում), շրջանային և քաղաքային կոմիտէները։

Կուսակցութեան ընդհանուր համագումարները հրաւիրվում են կենտրոնական կոմիտէներից առ նուազն տարին մէկ անգամ։

Ընդհանուր համագումարները վճռում են այն հարցերը, որ վերաբերում են ծրագրի լրացման ու ընդլայնման և կուսակցութեան կազմակերպութեան, որոշում են տակտիկան, կատարում են կենտրոնական կոմիտէի ընտրութիւն, հաստատում են նրա հաշուետուութիւնը, ելևէուաքը և որոշում են տալիս ամեն տեսակ խնդիրների մասին, որ վերաբերում են կուսակցութեան և նրա օրգաններին։

Ընդհանուր համագումարները բաղկանում են կենտրոնական կոմիտէի անդամներից, ներկայացուցիչներից այն շրջանների և քաղաքների, որոնք ունին կուսակցական կոմիտէներ, այն անդամներից, որոնք հրաւիրված են կենտրոնական կոմիտէից, և այն անձերից, որ ինքը համագումարը հրաւիրում է իր աշխատանքին մասնակցելու։

Ներկայացուցիչների քանակութեան բաշխումը կատարում է կենտրոնական կոմիտէը։ Կենտրոնական կոմիտէի հրաւիրած անձերի թիւը չը պէտք է լինի աւելի քան համագումարի ենթադրված կազմի քսաներորդական մասը։

Կենտրոնական կոմիտէին են վերապահվում՝ ընդհանուր ղեկավարութիւնը կուսակցութեան գործունէութեան, հրատարա-

կումը ամեն տասակ ակտերի կուսակցութեան անունից, կարգադրութիւնը կուսակցութեան հրատարակութիւնների վերաբերմամբ, ելևմուտի նախագծի կազմումը և կուսակցութեան կենտրոնական գանձարանի կարգադրութիւնը։

Կենտրոնական կոմիտէն ընտրվում է կուսակցութեան ընդհանուր համագումարից մի տարի ժամանակով գաղտնի ձայնավորութեամբ կենտ. կոմիտէի անդամների միջից։ Կենտրոնական կոմիտէի անդամների թիւը որոշում է համագումարը։

Կենտրոնական կոմիտէին իրաւունք է տրվում լրացնել իր կազմը նոր անդամներով այն կարգով, որ սահմանում են համագումարները։

Կոմիտէի ներքին կազմակերպումը այն կէտերում, որ նախատեսված չեն համագումարի որոշումներով՝ կատարում է նոյն ինքն կոմիտէն։

Տեղական գործերը վարելու համար շրջաններում կազմակերպվում են շրջանային կոմիտէներ, որոնք ընտրվում են շրջանային համագումարներից մի տարի ժամանակով։ Շրջանային համագումարներ հրաւիրելը թոյլվում է տեղական խմբերի հայեցողութեան։ Նոյն հիմունքներով, շրջանային կոմիտէների համաձայնութեամբ, կարող են հիմնվել ինքնուրոյն քաղաքային կոմիտէներ։

Ծանօթ.—Մինչև շրջանային կոմիտէների կազմվելը կուսակցութեան անդամներ են համարվում այն անձերը, որոնք մասնակ-

ցել են կուսակցութեան հիմնադիր ժողովի համար լիազօրների ընտրութեան։

Շրջանային խմբերը կուսակցութեան կազմի մէջ են ընդունվում կենտրոնական կոմիտէի կողմից, որ իրաւունք ունի կուսակցութեան կազմին չը պատկանող յայտարարել այն խմբերը, որոնք իրանց գործերով ջնասում են կուսակցութեան շահերին։ Այս մասին կենտրոնական կոմիտէը զեկուցանում է գումարվելիք առաջին հանդիսաժողովին, որ և կը կայացնէ վերջնական վճիռ։

Կենտրոնական, շրջանային և քաղաքային կոմիտէները իրաւունք ունին, ըստ պատկանելութեան, կազմակերպել օժանդակ բայօնական կոմիտէներ և որոշել իրանց փոխադարձ յարաբերութեան կարգերը։

Եթէ մի շրջանում կազմակերպվում են մի քանի կոմիտէներ՝ նրանց գործունէութեան սահմանները որոշվում են փոխադարձ համաձայնութեամբ։

Շրջանային կոմիտէների անդամները Թիֆլիսում գտնվելիս կարող են մասնակցել կենտրոնական կոմիտէի նիստերին խորհրդակցական ձայնով. իսկ երբ նրանք գալիս են կոմիտէների յանձնարարութեամբ կուսակցութեան վերաբերեալ գործով՝ կենտր. կոմիտէի նիստերին մասնակցում են ձայնի իրաւունքով։